

ընորոշել իւրաքանչիւրի գործունէութեան նկարագիրը, բարձրակէտը և այս շրջանի արգասիքները. ինչ որ անհարին է, երբ մի երկու նմուշներ են առաջարկում, ինչպէս, շատ անգամ, այս ձեռնարկի մէջ:

Գիտեմ որ այս ամենը մի մարդու ոյժերից վեր է, կամ պահանջում է մի անհատից երկար ու ծիգ տարիների ծանր և անխոնջ աշխատութիւն: Բոլոր ասածներիցս կարծեմ ակներև է, որ հաւաքական ու բազմակողմանի ոյժերը՝ այս ասպարէզում, աւելի կարճ ժամանակի ընթացքում, անհամեմատ աւելի կատարեալ գործ կ'առաջացնէին *): Իսկ եթէ այս նիւթերը լրացնելով՝ դասաւորէինք քաղաքակրթական պատմական աստիճաններով՝ միթէ աւելի ազդու չէին լինի նրանց տպաւորութիւնները: Օրինակ՝ «Ուսկեղարի վերածնութիւն» հատուածը կազմէինք «Հայ հեղինակներ», «Գրականութիւն» հատուածից վեր առնելով «Հայոց գրերի գիւտը», «Թրիստոնէական գրականութեան սկիզբն ու բարգաւաճումը», պատմական հատուածից «Վասակի վերջին օրերը», աւելացնէինք սրանց վրայ Ռ. Պատկանեանից «Բաջաջարդան Մամիկոնեանի մահը», «Եղիշէին» և այլն ու այսպէս շարունակէինք առնչունակ նիւթերը իստացնելով ու կենտրոնացնելով որոշ իդէաների, որոշ զգացմունքների աշխարհի շուրջը:

Այստեղ վերջ եմ տալիս խօսքիս այլևս հնարաւորութիւն չունենալով մտնել մանր գրախօսական դիտողութեանց մէջ և շեշտում եմ, որ պ. Վանցեանի «Հայ հեղինակները» գնահատելի և դասատուներին յանձնարարելի աշխատութիւն է: Թող յօրինողի այս «առաջին փորձը» փորձեն ուսառմարանները և տեսնեն, թէ այս գիրքը մրգան հարցասիրութիւն առաջացրեց աշակերտների մէջ դէպի հայ հեղինակներն ու նրանց երկերը:

Յ. Տէր Միրաքնանց

«Սիրու երգիչ» — Նահապես Քուչակի երգերը — մշակեց Գէորգ Ասատուր. Թիֆլիս, 1905, գ. 40 կոպէկ:

Մեր հին գրականութեան ամենաինքնատիւպ, ամենաքնքուշ ու գունագեղ ծաղիկներից մէկի, Նահապետ Քուչակի՝ եթէ հչ յայտնագործելը, գոնէ կատարեալ լոյսի մէջ գնելը

*) Վերջերս Թիֆլիսում այս բանի վրայ մտածողներ եղել են. մի անգամ էլ խորհրդակցել են մի քանի անձեր:

պէտք է վերագրել պ. Արշակ Զօպանեանի: Ճիշտ է, նրանից առաջ Տէվկանց և Կոստանեան, իրանց «Հայերգով» և «Միջնադարեան հայոց տաղերի ժողովածուառով հարթել էին նրա ճանապարհը, բայց գլխաւորապէս պ. Զօպանեանն է, որ «Նահապետ Քուչակի Դիւան»-ի առանձին հրատարակութեամբ Քուչակի դէմքին տուեց իր իսկական նշանակութիւնը:

Նրանք, որոնք հետաքրքրութիւնն ունեցան Քուչակի տողերը կարդալու ուշադրութեամբ, առանց խրանելու նրանց արտաքին, քիչ ուամիկ, օտարութի կեղեկց, կարող պիտի լինին համարձակ հաստատելու, որ Քուչակը մէկն է մեր մեծագոյն րանաստեղծներից: Քուչակ բանաստեղծ է յղացումով, ներշընչումի անկեղծութեամբ, պատկերների զայլելի երաժշտութեամբ, բանաստեղծ, վերջապէս, մինչև հոգու խորքը:

Արդ, պ. Գէորգ Ասատուր ստանձնել է մի մեծ պատասխանատութիւն, մշակել Քուչակը, աւելի հասարակ լեզուով՝ սրբագրել, գեղեցկացնել:

Առաջին հարցը, որ բնականօրէն ներկայանում է մեղայս դէպքում, այն է, թէ, պ. Ասատուր Ռմէնի եթէ ոչ աւելի—որովհետև մի գործ սրբագրելու համար պէտք է հեղինակից աւելի օժտուած լինել—գոնէ Քուչակի չափ բանաստեղծական թուիչք:

Աւելի քան կասկածելի է: Որովհետև «Դիւանի» հեղինակը կրում է իր մէջ հոգու այն թրթուումը, յուղումի այն կայծը, որ ամեն հասարակ մահկանացուի յատուկ չէ:

Եթէ պ. Ասատուր իր յաւակնութիւնը սահմանափակած լինէր Քուչակի լեզուի խորթութիւններն ու օտարարանութիւնները «մշակելու» մէջ, գործը դարձեալ բաւական դժուար, բաւական փափուկ գտնելով հանդերձ, ներողամիտ պիտի լինէինք:

Ֆրանսիական գրականութեան մէջ կայ մի տիուր տիպ, որը անհամացած է, գիտէք, ինչու, որովհետև հազուագիւտ անմտութիւնը ունեցած է սրբագրելու, պ. Ասատուրի ասութեամբ, «մշակելու» ... Շէկսպիրը, Այդ երանելին գտնում էր, որ անզիփացի հանճարը բաւական ներդաշնակ, բաւական կանոնաւոր ու յստակ չէ: Ու Գրանսիական հասարակութիւնը մի աւելի կատարեալ Շէկսպիրով բախտաւորացնելու համար, խեղաթիւրեց հանճարը:

Ցոյց տալու համար թէ ի՞նչպէս է «մշակում» պ. Ասատուր, առաջ բերենք օրինակեր:

Լուսնին, պարծենաս, ասեն, «Լուս կուտամ աստիճանորիս».

Ահա հողեղէն լրսին ի գրկիս ե'ւ երեսն երեսիս.

թէ, չիս աւգոալ այս գերուս, յետ տանիմ ըգփէշ կապայիս.

Վախեմ սիրոյ տէր լինիս, լուս պակաս տաս աստնչորիս:

**Այս գոհարը ահա թէ ինչ է եղել պ. Ասատուրի գրչի
տակ:**

Հէյ, մի պարծենար, լուսին երերուն,
թէ սիրուն քեզ ոչ-ոք չէ շողում:
Երկրի լուսինը՝ ք'զանից սիրուն,
Թուշ թըշիս կըպած կրծքիս է դողում:

Լուսին, մի ժպտար կասկածով այդպէս,

Նթէ ոչ կարսա կը զըցեմ ուսից,—

Վախում և մ, սիրես դու էլ իննթի ալէս,

Խաւարես, զրկնա աշխարհը լուսից:

Բաղդատութեան զնել անգամ կարելի չէ այս երկու քա-
նաստեղծութիւնները: Նախ՝ ինչ որ Քուչակ ասել է չորս տողի
մէջ, պ. Ասատուր ամփոփում է կրկին տողերի մէջ: Տարբերու-
թիւնը անհուն է. մի բանաստեղծութիւն որքան խիտ է, որքան
սեղմ, այնքան ուժեղ է և արտարայտիչ: Բանաստեղծութիւնը,
հրապարակախօսութիւն չէ, որպէսզի կարելի լինի առանց ան-
պատեհութեան ընդլայնումներ անել, վերից վար, վարից վեր
ձգուել, փուռել: Այսափ ձևի տեսակէտով: Գանք հիմա յղա-
ցումին, ոգիին: Քուչակ այսպէս է բանաստեղծում: Լուսին,
ասում են թէ դու պարծենում ես, որ աշխարհն լոյս ես տա-
լիս. բայց, տես, հողեղէն լուսինը գրկիս մէջ է, երեսն էլ երե-
սիս. եթէ չե՞ս հաւատայ ինձ նման մի գերու (սիրոյ գերի, որ-
քան ուժեղ է բացատրութիւնը) խօսքին, կապայիս փէշը ետ
տանեմ: Բայց ոչ, ոչ. այդ բանը չեմ անի, որովհետև վախենում
եմ, որ դու էլ սիրոյ տէր կը լինես, կը սիրահարուես, գլուխդ
կը կորցնես ու աշխարհին պակաս լոյս կը տաս:

Սիրոյ այս զմայլելի, քնքուշ, միամիտ, թեթև երգը՝ պ.
Ասատուր դարձրել է ուսուցիկ, ջրալի, յոխորա ու ծանր: Նախ
այդ սկզբնաւորութիւնը.

Հէյ, մի պարծենար, լուսին երերուն.

Հրաշալի չէ այդ «երերուն» ածականը. և մանաւանդ այդ
բացագանչական շեշտը: Եետոյ ոչ-ոք չէ շողումնը. յետոյ
յանդ բերելու համար «կրծքիս է դողումնը: Քուչակ ասել է
«հողեղէն լուսին». պ. Ասատուր՝ «երկրի լուսին»: մի նմանու-
թիւն, որ այնքան գործ է ածուել, որ մաշուել սպառուել է:
Եետոյ երկրորդ տունը: «Լուսին մի ժպտար ևայլն... եթէ ոչ
կարսա ևայլն: Քուչակի մէջ այդպիսի սպառնական ձև չկայ.
այդ սպառնանքը և ծիծաղելի է, և կոշտ, և ռամիկ: Ընդհա-

կառակը նա վախենում է, գողում է, որ եթէ իր կապայի փէ-
շը ետ տանի, լուսինն էլ նրա պէս սիրոյ կրակից կայրուի, նա
էլ սիրոյ տանջանքներին կմնթարկուի և «պակաս լուս կը տայ»:
Այս վերջին բացատրութիւնը եղել է պ. Ասատուրի գրչի տակ՝
«իւաւարես, զրկես աշխարհը լուսից», ինչ որ դարձեալ ծամ-
ծըմուած է և անտանելի. բացի այդ՝ «պակաս լուս տաս»-ի
մէջ, այնպիսի երանգներ կան, այնպիսի նրբութիւններ, որոնք
պէտք է զգալ: Քուչակ չի ցանկանում որ լուսինը ոչ թէ խա-
ւարի, այլ իր լոյսից մի կաթիլ անգամ կորցնէ. լուսնի համար
այդտեղ խորունկ խանդաղատանքի մի շեշտ կայ, որ բանաս-
տեղծութիւնը աւելի յուղիչ է դարձնում: «Պակաս լոյս տաս» և
գուցէ, այն ժամանակ, սիրով հարբած սիրահարները քո կաթնա-
գոյն շողերի տակ չկարողանան իրանց երազանքը պատըցը-
նել, չկարողանան ըմբոշիւլ, վայելել քո եթերային, հեռաւոր
ութաւիշէ գգուանքները:

Ահա մի նմուշ, «այլաբանական» մասից:

Արեգակն ու լուսինկան խմեցին եւ եղան մախուլը.¹⁾

Առաւոտն ի վերայ եկ, լոք²⁾ եղան երկու թուր եւ ի թուր³⁾)

Աստղերն ալ առաջ եկին, լուսնեկին ասին. դուն ի լուր⁴⁾).

Ատոր արեգակ ասն, որ ցանէ ի սար եւ ի թուր:

Այս պատկերալից այլաբանական տաղը՝ դարձել է մի
պարզ ու գոեհիկ առակ.

Լուսնի մէջ ու արեւի
Մէկ օր ծագեց թունդ կորւ
(Կոնծել էին երեւի),
եւ աստղերը ցան ցրիւ
Տժգոյն երկնի երեսին՝
Ռւզեցին նրանց խաղաղի,
Բազեց արեւն ու անցաւ
Արեւի դէմ կուր մղել:

Տիսրեց լուսին, դալիացաւ,

Փախուաս տրւեց դողալով.

Տագեց արեւն ու անցաւ

Արեւելքից շողալով:

Ահա և մի օրինակ «պամողխտի երգերից»:

Զիմ եարն էմանէթ կուտամ, ի վարդին մէջ պահցէր.

1) Թունդ հարբեցան. 2) յանկարծ. 3] միմեանց գէմ սրերը քաշեցին.

Թէ երթամ ու շուտով դառնամ, զամանաթս ի տէր հասուցէք.
Թէ երթամ խարիպուկ մեռնիմ, վարդն ձեզ՝ զտէրն յիշեցէք,
Այժմ տեսնենք պ. Ասատուրի «մշակածը»:
Նայեց պանդուխտն իր սիրածին կանչեց այսպէս:
«Ինձ նայեցէք»:

Նս Թողնում եմ իմ եարն աւանդ, վարդերի մէջ փապիայեցէք.
Եթէ դառնամ, տիրոջ հասցրէք աւանդն անխախտ իր կաթոգին,
Խսկ թէ մեռնեմ, աւանդու ձեզ, ողորմի տուէք տիրոջ հոգին...»

Թուչակը ուր, պ. Ասատուրը ուր: Առաջինն ասում է
իմ եարը «վարդի մէջ պահեցէք». Երկրորդը՝ «վարդի մէջ փայ-
փայեցէք». առաջինը՝ «թէ երթամ խարիպուկ մեռնիմ, վարդը
ձեզ՝ զտէրն յիշեցէք.» Երկրորդը՝ «իսկ թէ մեռնեմ աւանդս ձեզ,
ողորմի տուէք տիրոջ հոգին...» Նախ պէտք է լինի «հոգուն»
և հչ «հոգին», որովհետև «հոգին ողորմի տալը հայերէն չէ. և
յետոյ, «յիշեցէք»-ը, պարզ ու յուզիչ «յիշեցէք» առել է «հո-
գուս ողորմի տուէք» պառաւական ձեւ...

Նոր օրինակներ տալ աւելորդ ենք համարում: Մենք պա-
տահական նմոյշներ բերինք Թուչակի տաղերի իւրաքանչիւր
տեսակից. «աիրոյ», «այլաբանական» և «պանդիստի» երգերից:
Բաղզատութիւնը, անկասկած, պ. Ասատուրի համար անգութ է:

Ծ. Զաւէն

Ա. Մարգար. «Երախտիք», պատմուածք. 1904, Բագու, դին է 10 կոպէկ:

Իստելիգենցիայի, իհարիէ, ոչ բուրժուական ձգտումներով
տողորուած ինտելիգենցիայի՝ գաւառներում և գիւղերում գոր-
ծելու հարցը, ուսւ գրական որոշ ուղղութեան գործիչների ազ-
գեցութեան տակ արծարծուել է և մեր մամուլի և գրականու-
թեան մէջ: Մեզանում նոյնպէս հնչել է. «Պէտքի գաւառ, դէպի
գիւղը յայտնի կոչը: Սա մի հարց է սակայն, որ ինչպէս ամեն
հասարակական երևոյթ՝ կարելի չէ միայն զգացմունքներով
վճռել:

Եթէ նոյնիսկ իբրև աբսիօմ ընդունէինք, թէ մտաւրա-
կանութեան գիւղերում գործունէութիւնը աւելի նպատակայար-
մար է—ինչ որ գժուար է հաստատել, որովհետև քաղաքներում,
ինդուստրիական կենտրոններում տնտեսական և սոցիալական
յայտնի պայմանների շնորհիւ ազատագրումի խօսքին համար
աւելի նպաստաւոր հող կայ—պէտք էր դարձեալ մեր ուշա-
դրութիւնից չվրիպէր այն էական կէտը, թէ գիւղերը ո՞ր աս-